Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

‹‹Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման հմտությունների զարգացման ապահովում›› ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ ‹‹Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց›› ՊՈԱԿ

Թեմա՝ ‹‹Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում››

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Կատարող՝ Ռիմա Պապիկյան

Բովանդակություն

1. Ներածություն---------- 3
2. Բուլինգի սահմանումները և տեսակները ----------5
   2.1 Ի՞նչ է բուլինգը
   2.2 Բուլինգի տեսակները
3. Բուլինգի իրավական կարգավորումները ՀայաստանումԿարգավորման և կանխարգելման միջազգային փորձերը----------8
4. Հոգեբանական բուլինգի դրսևորումը միջին դպրոցում---------- 10
   4.1 Հոգեբանական բուլինգն աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում: Բռնարար և զոհ
   4.2 Բուլինգի օրինակներ սեփական փորձառությունից
   4.3 Հոգեբանական բուլինգն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում
   4.4 Ի՞նչ դեր ունի ծնողը բուլինգի գործընթացում

5.Գործնական մաս----------20

   5.1 Զրույցի մեթոդ: Հոգեբանական թեստ

6.Եզրակացություն---------- 27

7.Գրականություն---------- 29

Ներածություն

<< Ձեր երեխային կուռք մի դարձրեք. երբ մեծանա, զոհեր կպահանջի>>:

Պ.Բուաստ

Մարդու արժանապատվության և իրավունքների նկատմամբ հարգանքը, հոգատարությունը նրա բարօրության, համակողմանի զարգացման, հասարակական կյանքի նպաստավոր պայմանների ստեղծման նկատմամբ անվանում են մարդասիրություն: Մարդասիրությանը, սակայն, հակադրվում է մի երևույթ, որն իրենից ենթադրում է ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրում այլ անձի նկատմամբ՝ բուլինգ (անգլ. Bulling):

Բուլինգն անցանկալի , հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի անհամաչափություն,կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

Այս դատապարտելի երևույթն այսօր բավականին արդիական է դարձել և հայտնվել է բոլորի ուշադրության կենտրոնում: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի վերջին զեկույցների՝ աշխարհում 13-ից 15 տարեկան աշակերտների կեսը՝ շուրջ 150մլն երեխա, դպրոցում իր հասակակիցների կողմից ենթարկվել է բռնության: ՅՈՒՆԻՍԵՖ-ը երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր երեխաներին: Երեխաների դեմ բռնությանը վերջ դնելու համար հիմնադրամը կառավարություններին կոչ է անում միանալ <<Ոգեշնչե՛նք>> (INSPIRE) անունը կրող օրակարգին, որն իրենից ենթադրում է վերջ դնել երեխաների նկատմամբ բռնությանը:Բուլինգը՝ որպես ֆիզիկական և հոգեբանական բռնության ձև , հայտնվել է ոչ միայն հոգեբանների,մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվողների ուշադրության կենտրոնում,այլև իր արտացոլումնէ գտել ժամանակակից գրականության մեջ, ֆիլմերում: Օրինակ՝ Ս.Քինգի <<Քերրի>> գրքում համեստ և զուսպ աշակերտուհին, հոգնելով իր նկատմամբ կատարված բռնությունից,սկսում է դաժանորեն վրեժխնդիր լինել դասընկերներից:Այս թեմային է վերաբերում նաև Ջ. Էշերի <<13 պատճառ՝ ինչու>> գրքի էկրանավորումը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել միջին դպրոցում հոգեբանական բուլինգի դրսևորումը աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում՝ մանկավարժահոգեբանական աշխատանքներն ուղղելով բուլինգի մասնակից երեխաների սոցիալականացման կարողությունների զարգացմանը, ինքնագնահատականի բարձրացմանը:

Հետազոտական հարցը

Արդյոք հնարավո՞ր է միջին դպրոցում պարզել հոգեբանական բուլինգի առկայությունը, նրա դրսևորման ձևերը, գտնել կանխարգելման մեթոդները:

Խնդիրները և մեթոդաբանությունը

- Ուսումնասիրել բուլինգը , նրա առաջացման պատճառները, տեսակները:
- Տեսականորեն բացահայտել բուլինգի հակված միջին դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները:
- Ներկայացնել նրա դրսևորումը միջին դպրոցում:
- Գտնել և կիրառել կանխարգելման միջոցներ խնդրի լուծման համար:

2.1 Ի՞նչ է բուլինգը

Անգլերեն՝ bullying (անգլ. Bully-կռվարար,բռնարար) սահմանվում է որպես ճնշում, խտրականություն, ահաբեկչություն:Եզրույթն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով <<սիրելի>>, իսկ 1710 թվականից ստացել է ներկայիս իմաստը:Առաջինն այս խնդիրն ուսումնասիրել է շվեդ-նորվեգացի հոգեբան Դեն Օլվեուսը, ով 70-ական թվականներին հետազոտություններ անցկացրեց <<Բուլինգ տղաների միջավայրում>> անվանմամբ: Ըստ Օլվեուսի ՝ **բուլինգը որևէ երեխայի ուղղված մեկ կամ մի քանի երեխաների երկարատև կանխամտածված հալածանքն է:** Հալածանքը ներառում է ֆիզիկական, հոգեբանական բռնությունը և մեկուսացումը , ընդ որում՝ հալածողի և հալածվողի միջև հարաբերությունները միշտ անհավասար են:Ամեն մի կոնֆլիկտ չէ, որ կարող ենք բուլինգ համարել: Օրինակ, երբ երկու աշակերտ իրար հետ վիճում են, քիչ հետո հաշտվում, դա բուլինգ չէ,բայց եթե երևույթը պարբերական բնույթ է կրում կամ շարունակ կրկնվում է,ապա այն ներկայացնում ենք որպես բուլինգ: Ըստ բուլինգի մասնակիցների քանակի՝ տարբերակում են .

- **Բուն բուլինգ,** երբ բուլերը մեկն է:
- **Մոբինգ,** երբ հետապնդողների քանակը մեկից ավելի է:

Օլվեուսը նկարագրել է, թե ինչպիսի անձնային որակներ են, որոնք որոշ երեխաների կարող են բուլինգի ավելի հավանական թիրախ դարձնել: Դրանք են՝

- Երկչոտություն, անվստահություն
- Զգուշավորություն, մտահոգվածություն, զգայունություն,մեղմություն
- Շփումներից խուսափողականություն, պասիվություն
- Ցածր ինքնագնահատական
- Ընկերների բացակայություն
- Գերպաշտպանվածություն ծնողների կողմից
- Ոչ ագրեսիվություն
- Ֆիզիկական թուլություն

Նշված որոշ որակներ բնածին են (զգացմունքայնություն, ամաչկոտություն, ինքնամփոփություն), մինչդեռ մյուսները ձևավորվում են երեխայի դաստիարակության ընթացքում: Օլվեուսը տվել է նաև բռնության հակված երեխաների բնութագրիչները՝

- Ագրեսիվ են ուսուցիչների, ծնողների, այլ երեխաների նկատմամբ
- Բռնկվող են, դյուրագրգիռ
- Ձգտում են լինել դոմինանտ և ճնշող
- Կարծում են, որ շրջապատող աշխարհը վտանգավոր է
- Զուրկ են կարեկցելու կարողությունից
- Ունեն իրենց ուժը, դիրքը
- Ունեն գերարտահայված դրական կարծիք սեփական անձի մասին
- Տարեկիցներից ֆիզիկապես ուժեղ են (տղաները)
- Տարեկիցների շրջանում միջին կամ միջինից պակաս համակրանք են վայելում:

Նման երեխաները հաճախ մեծանում են ջերմ հուզական փոխհարաբերություններից զուրկ ընտանիքներում: Նրանք կարող են ստանալ լավ կրթություն, բավարար սնունդ, խնամք, սակայն ծնողները բավականաչափ ուշադրություն չդարձնեն երեխաների հուզական և զգացմունքային կարիքների բավարարմանը:

2.2. Բուլինգի տեսակները

Բուլինգը բռնության տեսակ է, որն ունի իր ենթատեսակները.

- **Հոգեբանական (հուզական) բուլինգ**

Բուլերը խոսքով (ծաղր, նվաստացում, սպառնալիք) զոհին հասցնում է հուզական լարվածության և ցածրացնում է նրա ինքնագնահատականը: Հոգեբանական բուլինգն ավելի խորը, տրավմատիկ վերքեր է առաջացնում զոհի մոտ, քան ֆիզիկական ահաբեկումը:

- **Ֆիզիկական բուլինգ**

Զոհի նկատմամբ գործադրվում է ֆիզիկական ուժ, բռնություն (բռունցքով հարվածել, մազերից քաշել, թքել, միտումնավոր կամ կոպիտ շարժումներ կատարել, որոնք կարող են վնասել զոհին):

- **Ֆինանսական բուլինգ**

Սպառնալիքների միջոցով զոհից պահանջում են գումար, խլում են նրա պայուսակը, փչացնում հագուստը, վնասում անձնական իրերը, դիտավորությամբ պատռում են գրքերն ու տետրերը:

- **Հարաբերական կամ սոցիալական բուլինգ**

Անձի մասին վատաբանելը, խմբից վտարելը, հասարակությունից մեկուսացնելը կամ տարանջատելն իրենից ենթադրում է սոցիալական բուլինգ: Բուլինգի այս տեսակը բացահայտ չէ և երկար ժամանակ կարող է մնալ առանց ուշադրության:

- **Կիբեռ բուլինգ**

Բռնության նոր ձև է, որն իր մեջ ներառում է ագրեսիայի արտահայտումը՝ օգտագործելով հաղորդակցման միջոցներ (համակարգիչ,հեռախոս): Էլեկտրոնային հասցեի, սոցիալական կայքերի, չաթերի օգնությամբ հնարավոր է հետապնդել զոհին, նրա մասին անձնական տեղեկություն,բամբասանք և վիրավորանքներ տարածել: Կիբեռ բուլինգի յուրահատկությունն այն է, որ բուլերը գործում է անանուն և իր կատարած քայլերի համար պատասխանատվության չի ենթարկվում: Օրինակ՝ միջին դպրոցի աշակերտները կարող են զոհի մասնակցությամբ որևէ տեսահոլովակ նկարել, դնել այն տարբեր սոցկայքերում՝դրանով նրան ճնշելով կամ նվաստացնելով:

2.Բուլինգի իրավական կարգավորումները Հայաստանում: Կարգավորման և կանխարգելման միջազգային փորձերը

ՀՀ-ում դեռևս չկան բուլինգի վերաբերյալ օրենքներ կամ դրա հաղթահարմանն ուղղված ռազմավարություններ: Մի շարք իրավական

կարգավորումներ որոշ չափով անդրադառնում են բուլինգի տարբեր դրսևորումների: Դրանք են՝

- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիան՝ընդունված 20. 11. 1989թ., Նյու Յորքում ՄԱԿ-ի կողմից՝ վավերացված ՀՀ-ում 22. 07. 1993թ.:
- ՀՀ Սահմանադրության ընդունած << Երեխայի իրավունքների մասին>> ՀՀ օրենքը՝ ընդունված 06.12.2015 թ.:
- <<Հանրակրթության մասին ՀՀ օրենքը>>՝ ընդունված 10.07.2009 թ.:

ՀՀ-ում արդեն իսկ եղած օրենսդրական բազայի և կարիքների գնահատման հիման վրա կարող է ստեղծվել իրավունքների իրացման մեխանիզմների, գործիքների ուղեցույց, որով կառաջնորդվեն դպրոցները: Հայաստանում չկա հստակ վիճակագրություն այն մասին, թե դպրոցում տարեկան քանի երեխա է հասակակցի կողմից բռնության ենթարկվում: Չնայած խնդրի գոյությանը՝ մեր երկրում այն չի դիտարկվում որպես խնդիր:

<<Հայաստանի դպրոցներում հիմնականանում ակադեմիական, գիտելիքահեն կրթություն է տրամադրվում, իսկ երեխաների աշխարհայացքի ձևավորման, միջանձնային հարաբերությունների կառուցման, հաղորդակցման հմտությունների ուղղությամբ հանրակրթական դպրոցներում աշխատանքներ չեն տարվում>>,- ասում է Հանրապետական մակավարժահոգեբանական կենտրոնի նախկին տնօրեն, այժմ՝ փոխնախարար Արաքսյա Սվաջյանը:

2016 թվականին բուլինգի թեմայով կատարվել է մի հետազոտություն, ըստ որի՝ մեր երկրում 1-14 տարեկան 10-ը երեխայից 7-ը ենթարկվում է ֆիզիկական կամ հոգեբանական բռնության: Հայաստանի 6 մարզերի մի շարք համայնքներում Վորլդ Վիժնի կողմից 2019 թ. իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ 12-18 տարեկան երեխաների 8.7%-ը վերջին մեկ տարվա ընթացքում բուլինգի է ենթարկվել, ընդ որում դա ավելի հաճախ եղել է հենց դպրոցում:

Այս համաշխարհային պրոբլեմի դեմ պայքարելու համար ամբողջ աշխարհում մշակվել են <u>հակաբուլինգային ծրագրեր,</u> որոնց արդյունավետությունը դեռևս փորձարկվում են դպրոցներում: Նորվեգիայում այդ ծրագիրը կոչվում է OBPP (Olweus Bullying Prevention Program)՝ մշակված Դեն Օլվեուսի կողմից:Այս ծրագիրը 2 անգամ նվազեցրել է բուլինգը նորվեգական դպրոցներում: Իսպանիայում SAVE ծրագիրը 57% փոխել է ագրեսորների վարքագիծը, իսկ Իռլանդիայում The Donegal

ծրագիրը 20% վերացրել է բուլինգը: Ռուսաստանում հակաբուլինգային են ,,Каждый важен'' և ,,Травли нет'' ծրագրերը:

ԱՄՆ-ի Ջորջիա նահանգը առաջինն էր, որ ընդունեց բուլինգի կանխարգելմանն ուղղված օրենք:Օրենքի ընդունման համար խթան հանդիսացավ 1999 թվականին Քոլումբայնում կատարված հրաձգությունը, երբ 2 աշակերտ հրազենով սպանեցին 12 աշակերտի և 1 ուսուցչի: 2005 թ. արդեն 23 նահանգ ընդունել է հակաբուլինգային օրենքներ:

3.Հոգեբանական բուլինգի դրսևորումը միջին դպրոցում

Դպրոցում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է, որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար և խախտել երեխայի `

ապահով կրթություն ստանալու իրավունքը: Մեզ համար առավել կարևոր է ուսումնասիրել հոգեբանական բուլինգի դրսևորումը միջին դպրոցում, բացահայտել առաջացման հնարավոր պատճառները, գտնել կանխարգելման և կարգավորման բոլոր հնարավոր տարբերակները:

Դպրոցում բուլինգը դրսևորվում է **ուղղակի և անուղղակի** ձևերով՝

- Ուղղակի բուլինգը բնորոշ է տղաներին (հարվածում են, ծեծում, ծաղրում , սպառնում զոհին):
- Անուղղակի բուլինգը՝ աղջիկներին (զոհին կանխամտածված ձևով մեկուսացնում են իրենց միջավայրից):

Դրսևորման այս երկու ձևերն էլ հանգեցնում են աշակերտի ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության: Մասնագետները կարծում են, որ դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելմանն ուղղված ծրագրերն առավել արդյունավետ են վաղ տարիքային խմբերում (տարրական և միջին դպրոցում),քանի որ երեխաների հասունանալուն զուգընթաց՝ նվազում է վարքագծի և արժեհամակարգի մեջ դրական փոփոխությունների իրականացման հնարավորությունը: Բուլինգի զոհ դարձածները ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը տխուր և անապահով վայր: Ըստ հետազոտության արդյունքների՝ ութերորդ դասարանի ամերիկացի աշակերտների 7%-ը մնում է տանը ամսական մեկ անգամ, քանի որ վախենում է բուլինգի զոհ դառնալուց: Պարզվում է՝ բուլերների 60%-ը 24 տարեկանում գործած է լինում ամենաքիչը մեկ հանցանք:

Կրտսեր և միջին տարիքի դպրոցականները, չունենալով կոնֆլիկտների խաղաղ լուծման հմտություններ, երբեմն վիճում են, հարվածում միմյանց, բայց որոշ ժամանակ անց կարող են համաձայնության գալ: Այն երեխաները, ովքեր ունեն ցածր ինքնագնահատական և ինքնավստահության պակաս,կարող են դառնալ կոնֆլիկտի զոհ:

Իսկ դպրոցում աշակերտները որքանո՞վ են ընկալում բուլինգը որպես բացասական երևույթ և ի՞նչն են համարում բուլինգ:Աշակերտների կարծիքով ծաղրը, վիրավորանքը, նվաստացումը, անհավասար վերաբերմունքը, անհարմար դրության մեջ դնելը, սեփական կամքը թելադրելը բուլինգի դրսևորում է:Նրանք ճանաչում և նույնականացնում են բուլինգը, գիտակցում են նրա բացասական հետևանքները, քննադատաբար են վերաբերվում դրան: Աղջիկներն ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում այս երևույթի նկատմամբ և ավելի շատ են գիտակցում բուլինգի ծանր

հետևանքները:Նրանք կարող են բռնության ենթարկվել արտաքին տեսքի, ճաշակի և հագուստի համար, և այս ամենը հոգեբանական խորը հետք կարող է թողնել նրանց վրա:Աշակերտների ընկերների քանակը ևս կարևոր է, որովհետև կոնֆլիկտային իրավիճակում հայտնվելիս , երբ շատերն են կանգնում աշակերտի կողքին , բուլինգի իրականացումը ձախողվում է, իսկ երբ աշակերտը ընկերներ չունի , մենակ է, նա դառնում է ավելի խոցելի, օտարվում է խմբից: Ականատես աշակերտները չեն ցանկանում օգնել, չեն շփվում նրա հետ, քանի որ վախենում են նրա կարգավիճակում հայտնվելուց: Հետազոտությունները ցույց են տվել , որ այս աշակերտները կազմում են 30%: Աշակերտների 30%-ը ակտիվ կամ պասիվ ձևով միանում է բուլինգ իրականացնող աշակերտին և սկսում է ծաղրել զոհին՝ նրան իրենցից օտարելով, նրա հետ չշփվելով, նրա կողքին չնստելով: Աշակերների միայն 40%-ն է, որ ականատես լինելիս միջամտում է: Ըստ վիճակագրության՝ ուսուցիչների շուրջ 40%-ն է, որ բուլինգի դեպքի ականատես լինելիս միջամտում է և հետևողական է լինում,որ այն չկրկնվի, իսկ նրանց 30%–ը միջամտում է,սակայն նրանց չի հաջողվում շտկել իրավիճակը, և լարվածությունն ավելի է խորանում: Շուրջ 20% դեպքերում ուսուցիչները տեղյակ չեն բուլինգի դեպքի մասին: Բուլինգի մասնակիցներին պայմանականորեն բաժանում են 5 խմբերի՝

- **հալածող կամ բուլեր**
- **հալածվող կամ զոհ**
- **հալածողի օգնականներ**
- **զոհի պաշտպաններ**
- **չեզոք մասնակիցներ**

Այժմ փորձենք բացահայտել , թե միջին դպրոցում ինչպե՞ս է բուլինգը դրսևորվում և մասնակիցներից յուրաքանչյուրի վրա ինչ ազդեցություն է ունենում:

3.1 Հոգեբանական բուլինգն աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում: Բռնարար և զոհ

Համաձայն Դեն Օլվեուսի՝ բռնության հանդեպ ուժեղ հակում դրսևորվում է այն երեխաների մոտ, ովքեր սերում են հետևյալ ընտանիքներից՝

- Միայնակ ծնողի կողմից դաստիարակվող երեխան ավելի է հակված հասակակիցներին հուզական բռնության ենթարկելու:
- Ավտորիտար և իշխանատենչ ընտանիքի երեխա:
- Ընտանիք,որտեղ մեծահասակները հաճախ են վիճում երեխաների մոտ:Դրանով նրանք օրինակ են ծառայում, և երեխան այդ ձևը կիրառում է դասընկերների վրա:

Բուլինգ իրականացնողը՝ **բուլերը**, բավականին **ինքնավստահ է**, **բարձր ինքնագնահատական ունի, խմբում լիդեր է , հարգանք չունի ուրիշի անձի նկատմամբ:** Նրա մոտ կա ընտանեկան անհաջողություններով պայմանավորված տագնապայնություն: Բուլինգ իրականացնող երեխաները իմպուլսիվ են,արագ բռնկվող,նրանց վարքը շրջապատի կողմից վրդովմունքի է արժանանում:Նրանք երջանիկ չեն լինում և ունենում են մեծահասակների աջակցության կարիքը:Այս երեխաներին պատժելը կամ նսեմացնելը որևէ արդյունքի չի հանգեցնի , եթե մենք նրանց չսովորեցնենք վերահսկել սեփական հուզական պոռթկումները, չձևավորենք ապրումակցման կարողություն:

Զոհն ունի **ցածր ինքնագնահատական,նրա մոտ գերարտահայտված է տագնապայնության , դժվարությամբ շփման, կոնֆլիկտայնության, ուրիշներից կախվածության մակարդակը:**Նա ունի նեգատիվ վերաբերմունք սեփական անձի նկատմամբ, էմոցիոնալ է,կարող է ֆիզիկապես թույլ լինել, ունենալ արտաքինի հետ կապված որևէ թերություն : Զոհի կարգավիճակում կարող են հայտնվել մեծահասակների պաշտպանության ներքո գտնվող երեխաները: Նրանք կարծում են, որ իրենք չեն կարող պաշտպանել սեփական անձն ու ունեցվածքը, հույսը դնում են մեծահասակների վրա, որոնք մշտապես պաշտպանում են իրենց և հոգում երեխաների բոլոր կարիքները: Արդյունքում չեն ձևավորվում այդ երեխաների ինքնապաշտպանության և պայքարելու կարողությունները,քանի որ նրանք իրենց հույսը դնում են ծնողներ վրա: Չնայած այս ամենի հիմքում ընկած են ծնողական սերն ու հոգատարությունը,սակայն այն երեխայի մոտ ձևավորում է անիքնավստահություն, ցածր ինքնագնահատական, որի արդյունքում նա իր տարեկիցների մոտ իրեն հարմարավետ չի զգում,ընկերներ չունի և խուսափում է բոլորից;Բայց ամենից վատն այն է, որ նման իրավիճակում հայտնված երեխաները կարծում են, որ իրենց նկատմամբ իրականացվող բուլինգն արդարացված է, իրենք արժանի են նման վերաբերմունքի: Քանի դեռ նրանք ոչ միայն կարծում են, որ իրենք

արժանի են դրան, այլև նույնիսկ ծայրահեղ իրավիճակներում չեն կարողանում պաշտպանել իրենց, ապա նրանք բուլերներ կողմից ընտրվելու են որպես թիրախ:

Կա նաև երեխաների մի փոքր խումբ,որոնք թե՛ բուլինգ իրականացնող են,թե՛ բուլինգի թիրախ:Որպես կանոն, նման երեխաները բուլինգի են ենթարկվում իրենցից ավելի ուժեղ տարեկիցների կողմից, և ի պատասխան դրա՝ իրենք էլ հալածում են իրենցից ավելի թույլերին:Բուլինգի մասնակից երեխաների մի տեսակ կա,որին անվանում են քամելեոն:Նա հանգամանքներով պայմանավորված՝ կարող է հանդես գալ և զոհի, և բռնարարի դերերում:Նրա մոտ դրսևորվում է ուժեղ տագնապայնություն, որովհետև նա վախենում է , որ ինքը կարող է հայտնվել զոհի կարգավիճակում և պաշտպանվելու համար սկսում է հարձակվել:

3.2 Բուլինգի օրինակներ սեփական փորձառությունից

Բուլինգը սովորաբար տեղի է ունենում մեծահասակների բացակայության դեպքում, իսկ հալածվող երեխաները ցածր ինքնավստահության պատճառով տեղի ունեցածի մասին մեծահասակներին չեն հայտնում:

Միջին դպրոցում սովորող 2 աշակերտուհի հոգեբանական բուլինգի էին ենթարկում իրենց դասարանում սովորող 2 աղջիկների: Ամեն ինչ կատարվում էր հույժ գաղտնի ձևով,որպեսզի ուսուցիչներից ոչ ոք չիմանա: Ես հայտնվեցի ճիշտ պահին,ճիշտ տեղում և ինձ հաջողվեց բուլինգի ենթարկվող աղջիկներից մեկի հետ զրուցել և հասկանալ՝ ինչ է կատարվում: Սկզբում շատ դժվար էր նրանց բերանից խոսք կորզելը, որովհետև աղջիկները շարունակ լալիս էին՝ գտնվելով հոգեբանական ծանր վիճակում: Նրանց շուրջը պտտվում էր երրորդ աղջիկը, ով փորձում էր ցրել ստեղծված ծանր մթնոլորտը՝ ինձ համոզելով, որ ոչինչ չի պատահել, ամեն ինչ կարգին է: Բռնության ենթարկված աղջիկներց մեկը խոստովանեց, որ դասարանից երկու աշակերտուհիներ շարունակ ծաղրում են իրենց և խուսափում են իրենց հետ շփվելուց: Ի դեպ, բուլինգի ենթարկողներց մեկն այնքան էլ լավ չէր սովորում, բայց ուներ գեղեցիկ արտաքին, իսկ բուլինգի ենթարկվողները լավ սովորողներ էին, բայց

արտաքնապես խեղճ ու ճնշված տեսք ունեին: Ես պարզեցի, որ այդ դասարան

ուսումնական տարվա սկզբում նոր աշակերտներ էին եկել, որոնցից մեկը ինքնահաստատման փորձեր էր արել, բայց դասարանի լիդեր-աշակերտները նրան հնարավորություն չէին տվել: Դասարանի այն աշակերտները, ովքեր մտերմացել էին նորեկի հետ, սկսել էին ենթարկվել բուլինգի : Նորեկն այն երրորդ աղջիկն էր, ով ինձ համոզում էր, որ ոչինչ չի պատահել: Ահա այս երկու աղջիկները, մտերմանալով նորեկի հետ, իրենց կամքին հակառակ օտարվել էին դասարանական կոլեկտիվից՝ ենթարկվելով հոգեբանական բուլինգի:

Բուլինգի մեկ այլ դրսևորման հանդիպեցի մի ուրիշ դասարանում, որտեղ ֆինանսապես բավականին ապահով ընտանիքի երեխան, ով խելացի էր ու դասարանում հեղինակություն էր վայելում, բուլինգի էր ենթարկում դասարանի մյուս տղաներին: Նա բացահայտ ցույց էր տալիս, որ ինքն առավել է մյուսներից,կարող է վիրավորել, հարվածել, որովհետև ինքը դրա իրավունքն ունի:Սկզբում որպես դիտող՝ ես նկատեցի, որ դասարանի տղաները վախենում են նրանից:Դասարանում որևէ միջադեպ առաջանալիս հանգուցալուծումը տրվելու էր բռնարարի առջև զոհի ներողություն խնդրելով կամ նրա կողմից զոհին հարվածներ հասցնելով: Իմ այն հարցին, թե ինչու՞ պիտի մյուսները կատարեն քո հրամանները, քեզնից ներողություն խնդրեն,իսկ դու ՝ ոչ, նա պատասխանեց, որ ինքը չի վախենում ոչնչից, որովհետև ,միևնույնն է, իրեն ոչ մեկը չի պատժելու՝ անգամ եթե ինքն է մեղավոր:

Կատարված դեպքերը ես դիտարկել եմ որպես հոգեբանական բուլինգ և անմիջապես հայտնել դասղեկներին, որպեսզի նրանք դասարանում բուլինգը կանխելու համար համապատասխան աշխատանքներ տանեն իրենց աշակերտների հետ:

Իսկ ինչպե՞ս հասկանալ,որ երեխան բուլինգի զոհ է դարձել:Մենք նրա վարքագծում ակնհայտ փոփոխություններ կնկատենք, եթե հետևողական լինենք :Ենթարկվելով բուլինգի՝ երեխան դառնում է տխուր, ինքնամփոփ, ընտանիքում ագրեսիվ վարք է դրսևորում, լռում է և ծնողին ոչինչ չի ասում իր նկատմամբ գործադրվող բռնության վերաբերյալ:Շատ դեպքերում երեխան լռում է, որովհետև կարծում է, որ ծնողի միջամտությունն արդյունավետ չէ և իրավիճակն ավելի կարող է բարդացնել:Ցավալին այն է, որ երբ բուլինգ իրականացնող երեխայի ծնողին են հայտնում այդ մասին, նա կամ ուսուցչին է մեղադրում, արժեզրկում, կասկածի տակ դնում նրա գիտելիքները կամ խոստովանում է, որ երեխան տանն էլ խնդիրներ ունի , և ծնողն ինքն էլ չի կարող այդ հարցին լուծում տալ: Ուրեմն ծնողը պիտի ուշադիր լինի երեխայի նկատմամբ, պարզի, թե ինչու՞ է դադարել ընկերների հետ շփվել,

ինչու՞ չի ցանկանում դպրոց գնալ, ինչու՞ է տուն վերադառնալիս ընտրում դժվարամատչելի ճանապարհներ և այլն: Օրինակ՝ իմ պրակտիկայում հանդիպել է յոթերորդ դասարանում սովորող մի աղջիկ, ով տուն գնալիս կարճ ճանապարհի փոխարեն ընտրել էր երկար ճանապարհը: Պատճառն այն էր, որ ծնողը պահանջել էր դասերից հետո անմիջապես տուն վերադառնալ, քանի որ աղջիկը վարքագծային խնդիրներ ուներ և սեռահասունացման հետ կապված՝ ձգտում էր շփվել միայն տղաների հետ, սակայն նրանց կողմից ենթարկվում էր ծաղրի:

Հաճախ պատահում է , որ ծաղրի է ենթարկվում այն աշակերտը, ով դասին միշտ պատրաստ է:Նրա նկատմամբ բուլինգի դրսևորման ձև է <<գիրք կրծող>>, <<կավիճ կրծող>> արտահայտությունների գործածությունը:Փորձը ցույց է տվել, որ կրտսեր դպրոցում լավ սովորող տղաները միջին դպրոցի վերջում կորցնում են ուսման նկատմամբ հետաքրքրությունը, որովհետև վախենում են դասընկերների ծաղրից: Զարմանալին այն է, որ ցածր (IQ) ինտելեկտի գործակից ունեցող աշակերտները ծաղրում և ահաբեկում են իրենցից լավ սովորող դասընկերներին: Այսպիսի բուլերները ձգտում են ֆիզիկական միջոցներով ծածկել այն, ինչին չեն կարող հասնել իրենց խելքով:

Բուլինգը բացասական հետևանք է թողնում ոչ միայն զոհի վրա, այլև ագրեսորի, որովհետև նրա մեջ ծնվող ագրեսիան հետագայում դառնում է կայուն վարքագիծ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ժամանակի ընթացքում բուլինգի բռնարարզոհ դերերը կարող են փոխվել: Զոհը հետագայում ինքը կարող է դառնալ բռնարար կյանքի տարբեր ոլորտներում՝ աշխատավայր, ընտանիք և այլն: Այս երևույթը կարող ենք կապել Սթիվեն Կարպմանի <<Ճակատագրի եռանկյունի>> տրանսակցիոն վերլուծության հետ, որում կան 3 հոգեբանական դերեր՝

- Գործող անձ,ով խաղում է զոհի դեր (victim):Նա ունի ճնշված, տանջված,մշտապես հետապնդող դեր:
- Գործող անձ, ով ճնշում, պարտադրում կամ հետապնդում է զոհին (persecutor)
- Փրկարար (rescuer) , ով գալիս է օգնության զոհին,ցանկություն ունի փրկել իրավիճակը կամ թույլին:

Ստեղծվում է մի իրավիճակ, որտեղ աշակերտը սկսում է խաղալ զոհի կամ հետապնդողի դեր: Այդ ժամանակ մյուս աշակերտները վերցնում են այլ դերեր: Այնուհետև «2 խաղացողներ տեղափոխվում են եռանկյունով, այդպիսով տեղի է ունենում անցում մի դերից մյուսը»: Օրինակ, զոհը փոխակերպվում է փրկարարի, փրկարարը՝ հետապնդողի կամ, ինչպես հաճախ պատահում է, փրկարարը փորձում է դուրս գալ իրավիճակից և հայտնվում է զոհի դերում: <<Յուրաքանչյուր խաղացողի գաղտնի նպատակն ու իրավիճակուում գտնվելն այն է, որ յուրաքանչյուրը բավարարում է իր չարտահայտած (երբեմն անգիտակցական) հոգեբանական ցանկությունները, պահանջմունքները այնպես, ինչպես թույլատրելի է համարում: Այդպիսով , յուրաքանչյուր խաղացող հանդես է գալիս՝ ելնելով իր սեփական կարիքներից և ոչ թե իրական պատասխանատվությունից և այլասիրությունից>>:



Բուլինգի պրոցեսում ի՞նչ վարքագիծ են դրսևորում դասարանի մյուս աշակերտները:

- Բուլերի օգնականները դասարանում այնքան էլ հարգված չեն,նրանք ենթարկվում են բուլերին,որովհետև վերջինս պլանավորում է , ընտրում զոհին, իսկ իրենք ծաղրում են կամ հարվածում նրան: Նրանց ինքնագնահատականը միջին է:
- Բարձր ինքնագնահատական ունեն զոհի պաշտպանները, ովքեր հուսալի են,բարի և այդ բարությամբ էլ ապրումակցում են զոհին և օգնում նրան:
- Չեզոք մասնակիցները սոցիալական հարաբերություններում բավականին անկախ են, ինչը նրանց թույլ է տալիս ընդհանրապես չխառնվել կոնֆլիկտին:Նրանք ոչ մեկի ազդեցության տակ չեն ընկնում և հանդես են գալիս դիտորդի դերում:Շատ դեպքերում դա նորմալ չէ, որովհետև նրանք դառնում են հանդիսատես, ովքեր դիտում են բուլինգի երևույթն իբրև ներկայացում:

3.3 Հոգեբանական բուլինգն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում

Միջին դպրոցում աշակերտը կարող է բուլինգի ենթարկվել ոչ միայն դասընկերների,այլև ուսուցչի կողմից: Օրինակ կան այնպիսի երեխաներ,ովքեր ինքնամփոփ են, անհամարձակ, իսկ ուսուցիչն իր խնդիրը չի համարում բացահայտել նրանց ամբողջական կարողությունները: Երեխայի դանդաղ մտածելու կամ խոսելու պատճառով անհանդուրժող և անհամբեր ուսուցիչը կարող է նրան դիտողություն անել, շտապեցնել, և երեխան որպես կանոն՝ այդ ուսուցչի դասին այլևս չի ցանկանա խոսել, իր իմացածն արտահայտել:Դասարանն աշակերտի կյանքում շատ կարևոր խումբ է, և նա չի ցանկանում , որ իր դասընկերները տեսնեն, թե ինչպես է ուսուցիչն իրեն ծաղրում կամ նվաստացնում: Երբ ուսուցիչն անհարգալից է վերաբերվում որևէ աշակերտի, ապա մյուս աշակերտները դառնում են բուլինգի պասիվ մասնակիցներ: Նրանք սկսում են խուսափել այդ աշակերտից, նրա հետ վարվում են այնպես, ինչպես ուսուցիչն է վարվել և ցույց են տալիս, որ այդ աշակերտը կորցրել է իր դիրքը դասարանում:

Հետաքրքրական է նաև ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում բուլինգի դրսևորման մի ձև, որ վերջերս է տարածում գտել մեր դպրոցներում: Ուսուցիչը ընդգծված դրական վերաբերմունք է ցույց տալիս այն աշակերտի նկատմամբ, ով իր մոտ լրացուցիչ պարապում է: Եվ հակառակը՝ բացասական վերաբերմունք է դրսևորում այն աշակերտի հանդեպ, ով իր մոտ չի պարապում կամ պարապում է ուրիշ ուսուցչի մոտ: Նա աչքի տակ է վերցնում այդ աշակերտին և նրան սկսում է բուլինգի ենթարկել: Հաճախ ուսուցիչներն իրենց անձնային,

հոգեբանական, ընտանեկան և աշխատանքային խնդիրները տեղափոխում են դպրոց՝ առաջացնելով լարված փոխհարաբերություններ մեկ կամ մի քանի աշակերտների կամ ամբողջ դասարանի հետ: Ուսուցիչը կարող է աննրբանկատորեն ամբողջ դասարանի ներկայությամբ աշակերտին դնել անհարմար իրավիճակի մեջ՝ նրան անձնական թեմայով դիտողություն անելով, նրա նկատմամբ ֆիզիկական կամ խոսքային բռնություն գործադրելով: Ուսուցիչը երբեմն դրական և հարգալից է այն աշակերտի հանդեպ, ում ուսումնական կարողություններն ու առաջադիմությունը գերազանց են կամ սոցիալական կարգավիճակը և ընտանիքի ֆինանսական դրությունն ավելի բարձր է: Հետևաբար աշակերտները գիտակցում են խտրական վերաբերմունքի և իրենց կամ դասընկերոջը բուլինգի ենթարկելու պատճառները:

Բուլինգի մասին խոսելիս մենք անմիջապես պատկերացնում ենք զոհի կարգավիճակում գտնվող աշակերտի: Իրականում բուլինգի զոհ կարող է դառնալ նաև ուսուցիչը: Նման երևույթի կարելի է հանդիպել բարձր դասարաններում, երբ աշակերտները, թիրախավորելով կոնկրետ ուսուցչի, տապալում են նրա դասը: Հետաքրքիրն այն է, որ միևնույն աշակերտները կարող են բուլինգի ենթարկել մի ուսուցչի և բոլորովին այլ, հանգիստ վարք դրսևորել մեկ այլ ուսուցչի դասի ընթացքում: Այս ամենը խորը հոգեբանական հիմքեր ունի, և պատճառները պիտի փնտրել ուսուցչի մասնագիտական հմտությունների, դասապրոցեսի կազմակերպման և աշակերտի հետ վարվելաձևի մեջ: Աշակերտները կարող են նաև ուսուցչին բուլինգի ենթարկել՝ նրա դասավանդած առարկան համարելով ոչ այնքան կարևոր իրենց համար :

3.4 Ի՞նչ դեր ունի ծնողը բուլինգի գործընթացում

Դպրոցական միջավայրը բուլինգից զերծ պահելու համար անհրաժեշտ է աշխատել ոչ միայն ուսուցիչների, այլև ծնողների հետ : Նրանք պարտավոր են ուշադիր լինել և աչք չփակել իրենց երեխաների այն արարքների վրա, որոնք կարող են ճակատագրական լինել մեկ այլ երեխայի համար: Այն ծնողները, ովքեր կարծում են, որ իրենց երեխան ,իր հարցերն ինքնուրույն լուծելով, հմտություն է ձեռք բերում ողջ կյանքի համար՝ դրսևորելով բռնարարի դեր, նրանք սխալվում են , որովհետև այդ վարքագիծը հետագայում վերափոխվելու է բնավորության՝ դառնալով պատուհաս հասարակության համար: Երբ ծնողը փոքր տարիքում մեծարում է երեխային, նրա մեջ ծնում է մեծամտություն՝ փակելով երեխայի աչքերը

իրականության առաջ : Երեխան կարծում է , որ ինքն ավելի մեծ արտոնությունների կամ զիջումների է արժանի, քան մնացածները:

Ծնողի վարքը կարևոր է երեխայի համար այնքանով, որ որոշակի տարիքում (6-10 տարեկան) երեխան ընդօրինակում է ծնողին, որդեգրում է նրա մոտեցումները, մտքերը ՝ նմանվելով նրան:

Հաճախ բուլինգի ենթարկված երեխայի ծնողն անզոր է լինում, մեղավորության զգացում է ունենում երեխայի նկատմամբ: Երեխային օգնելու համար ծնողը երբեմն սկսում է մեղքը բարդել նրա վրա՝ ասելով <<Դու ես մեղավոր>>, <<Դու թույլ ես>>, <<Ինչու՞ դու էլ նրա նման չխոսեցիր>> արտահայտությունները՝ չգիտակցելով, որ դրանով նա ավելի է խորացնում երեխայի հոգում առաջացած անդունդը: Փոխարենը ծնողը պիտի երեխային ասի,որ ինքը հավատում է նրա ուժերին,ցավում է պատահածի համար , որ դա նրա մեղքով չի եղել,լավ է, որ այդ մասին ինքը գիտի և միասին կհաղթահարեն : Այսպես երեխան կզգա, որ պաշտպանված է , մենակ չէ և ճիշտ է արել, որ հայտնել է ծնողին: Ուրեմն ծնողն ունի մեծ պատասխանատվություն երեխայի անձի ձևավորման համար:

<<Դաստիարակելով երեխաներին ՝ ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագան, իսկ դա նշանակում է՝ նաև ամբողջ աշխարհի պատմությունը>>: Ա.Ս.Մակարենկո

4.Գործնական մաս

4.1 Զրույցի մեթոդ: Հոգեբանական թեստ

Գործնական մասի համար ես ութերորդ դասարանում վարել եմ դաս <<Բուլինգ>> թեմայով, պարզել, թե աշակերտները որքանով են տեղյակ այդ երևույթի մասին: Ես նրանց ներկայացրել եմ, թե ինչ է իրենից ներկայացնում բուլինգը, որոնք են նրա տեսակները, ովքեր կարող են դառնալ բուլինգի զոհ, բուլեր, բացատրել,թե ինչ մեթոդներով պիտի կանխել այն: Աշակերտները համակ ուշադրությամբ լսել են ինձ, տվել իրենց հուզող հարցերը՝ ստանալով սպառիչ պատասխաններ: Զրույցի մեթոդը կիրառելուց հետո ես անցել եմ գործնական մասին՝ աշակերտներին բաժանելով իմ կողմից կազմած հոգեբանական թեստը: Թեստի հարցերը և տարբերակները հավաքված էին Օլվեուսի հարցադրումների հիման վրա՝ իմ կողմից ենթարկվելով որոշակի փոփոխությունների: Ստորև ներկայացնում եմ թեստը

Հոգեբանական թեստ

1.Դասարանում ես շատ ընկերներ ունեմ

- Այո, ես շփվում եմ բոլորի հետ
- Շփվում եմ մի երկուսի հետ
- Ոչ, ես ոչ մեկի հետ չեմ շփվում

- Ես կուզենամ բոլորի հետ շփվել

2. Ինձ համար կարևոր է ընկերոջս արտաքինը

- Այո
- Ոչ
- Իհարկե, եթե նա գեղեցիկ չէ, ուրեմն ոչ մ լավ բանի արժանի չէ

3. Ես կարծում եմ, որ իմ դասընկերներն ինձնից ավելի լավն են

- այո
- երբեմն
- մենք բոլորս հավասար ենք

4. Մեր դասարանը շատ համերաշխ է

- Այո
- Մենք շատ քիչ ենք շփվում
- Ոչ, համերաշխ չէ

5. Ես հաճախ եմ ունենում վախի և տագնապի զգացում

- Այո
- Ոչ
- Երբեմն

6. Երբ ինձ մոտ նեղացնում են դասընկերոջս,

- Ոչինչ չեմ անում, նա արժանի է
- Չեմ խառնվում, որովհետև դա ինձ չի վերաբերում
- Պաշտպանում եմ նրան

7. Ինձ թվում է՝ դասընկերներս ինձ հետ չեն ուզում շփվել

- Ոչ ինձ հետ բոլորը շփվում են
- Ես ինքս չեմ ուզում նրանց հետ շփվել
- Այո, ինձ հետ չեն շփվում

8. Մեր դասարանում կան աշակերտներ, որոնց ենթարկվում են մյուսները

- Ոչ, չկան

- Այո, կան
- Ես նրանցից մեկն եմ

9. Ես կարծում եմ՝ ուժի միջոցով կարելի է լուծել խնդիրները

- Այո, դա միակ տարբերակն է
- Ոչ, պիտի խաղաղ ճանապարհով լուծել
- Երբեմն առանց դրա հնարավոր չէ

10. Մեր դասարանում կա մեկը, ում հետ չեն շփվում

- Ոչ, չկան
- Այո, կան
- Ես նրանցից մեկն եմ

11. Մեր դասարանում կա ծաղր, նվաստացում

- Այո, միշտ վեճեր և կռիվներ են
- Ոչ, չկա
- Երբեմն լինում են

12. Իմ կարծիքով ուսուցիչները ստորացնում են աշակերտներին

- Այո
- Ոչ
- երբեմն

13. Մեր դասարանում կան աշակերտներ, ովքեր ծաղրում են, նվաստացնում ուսուցչին

- Ոչ, չկան
- Այո, կան

14. Եթե ինձ մոտ ստորացնեն դասընկերոջս

- Ես էլ նրանց կմիանամ
- Կպաշտպանեմ նրան
- Ոչինչ չեմ անի, դա ինձ չի վերաբերում

14. Ես ունեմ դասընկերներիս աջակցության կարիքը

- Այո
- Ոչ
- Երբեմն

15. Ես կարծում եմ, որ իրավունք ունեմ ճնշել նրան, ում չեմ սիրում

- Այո, իհարկե
- Ոչ, համաձայն չեմ

16. Ես չեմ օգնում բռնության ենթարկվող դասընկերոջս, որովհետև

- Վախենում եմ, որ ինձ նույնպես կնեղացնեն
- Չեմ վախենում և օգնում եմ

17. Ես կարծում եմ, որ այս երևույթի մասին պետք չէ մեծահասակներին տեղեկացնել

- Այո, համաձայն եմ
- Ոչ, պիտի նրանց անպայման ասել

18. Ըստ իս՝ բուլինգ իրականացնողը պիտի պատժվի

- Այո
- Ոչ
- Երևի

19. Եթե մեր դասարանը նավով ճամփորդեր, ես կլինեի

- Նավապետ
- Նավապետի օգնական
- Նավաստի

20. Ինչ եմ հասկանում ես՝ բուլինգ ասելով



Ներքևում պատկերված աղյուսակում հակիրճ ներկայացրել եմ թեստի հարցադրումներից 10-ի պատասխանները.

Դասարանը համերաշխ է	21 այո	6 ոչ	
Տագնապի և վախի զգացում ունի	3 այո	19 ոչ	9 երբեմն
Երբ իր մոտ նեղացնում են դասընկերոջը	23 պաշտպանում է	6 չի խառնվում	

Դասարանում կա աշակերտ, ում ենթարկվում են մյուսները	12 այո	18 ոչ	
Խնդիրները պիտի լուծել ուժի միջոցով	3 այո	13 ոչ	14 երբեմն
Դասարանում կա ծաղր և նվաստացում	3 այո	16 ոչ	11 երբեմն
Ուսուցիչը ստորացնում է աշակերտներին	2 այո	8 ոչ	20 երբեմն
Ունի դասընկերոջ աջակցության կարիքը	3 այո	9 ոչ	18 երբեմն
Չի օգնում զոհին,որովհետև	1 աշակերտ վախենում է	29 աշակերտ չի վախենում և օգնում է	
Երևույթի մասին պետք է մեծերին տեղեկացնել	15 այո	15 ոչ	

Ուսումնասիրելով լրացված թեստերի պատասխանները՝ ես կազմել եմ դիագրամա ութերորդ դասարանում բուլինգի երևույթի դրսևորման վերաբերյալ

- Պոտենցիալ բուլեր 9%

- Ձոհ 10%
- Ձոհի օգնական 23%
- Չեզոք մասնակիցներ 59%



Եզրակացություն

Համաշխարհային խնդիր դարձած այս երևույթն օր օրի ավելի է մեծանում:Միայն համակողմանի, ներդաշնակ աշխատանքի, երևույթի նկատմամբ շատ մեծ ուշադրության, նրա կանխարգելմանն ուղղված մանկավարժական և հոգեբանական ծրագրերի կիրառման դեպքում կարելի է արմատախիլ անել բռնությունը դպրոցում:Որպես դպրոցական կոլեկտիվում բուն դրած << ախտ>>՝ բուլինգը պիտի <<բուժել>> ոչ միայն զոհի մոտ, այլ կոլեկտիվի , որովհետև այն բոլորի խնդիրն է : Պիտի դպրոցական ողջ կոլեկտիվը՝ ուսուցիչ, տնօրեն, հոգեբան, ծնող, դասարան նպատակամղված գործի անցնեն երևույթը դպրոցում իսպառ բացառելու համար: Բռնությունից դեպի մարդասիրություն սահուն անցում կատարելու համար պիտի գործի դրվի **էմպատիայի, նույնականացման և ռեֆլեքսիայի** մեթոդները: Մեթոդների ճիշտ կիրառման արդյունքում մենք բուլինգի ենթարկող աշակերտի մոտ կզարգացնենք ինքնաճանաչողության և սոցիալական կարողունակությունը: Նա իրավիճակին կնայի դիմացինի աչքերով, կճանաչի նրա հույզերն ու զգացմունքները, կկարեկցի, կսկսի վերլուծել սեփական ցանկությունները, արարքները և դրանց հետևանքները:

Ըստ իմ կատարած հետազոտությունների արդյունքների՝ ես հանգեցի եզրակացության, որ բուլինգի տեսակներից դպրոցում առավել տարածված է հոգեբանական բուլինգը, որը դրսևորվում է միաժամանակ և աշակերտ-աշակերտ, և աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններում: Երևույթը կանխելու համար ես առաջարկում եմ կիրառել հետևյալ միջոցառումները.

1. Կազմակերպել իրազեկիչ հանդիպումներ , որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին:
2. Աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, կարդալ այդ իրավունքները պաշտպանող օրենքները:
3. Անհատական զրույց ունենալ բուլինգի մասնակիցների հետ, լսել նրանց առանձին-առանձին:
4. Տեղեկացնել կրթական հաստատության բոլոր ներառված օղակներին իրավիճակի մասին:
5. Կազմել միասնական աշխատանքային պլան՝ բոլոր օղակների ներգրավվածությամբ:

6. Ապահովել ուսուցիչների և ծնողների համագործակցությունը:Աշակերտների հետ վարել զրույցներ տարբեր հոգեբանական թեմաներով,հետաքրքրվել նրանց նախասիրություններով և զգացմունքներով:
7. Տարվա մեջ մի քանի անգամ կազմակերպել անանուն, սոցիոլոգիական հարցումներ՝ դպրոցում տեղադրելով արկղ, որտեղ աշակերտները կգցեն իրենց անանուն գրառումները:

Դպրոցը պիտի դառնա ապահով և անվտանգ միջավայր բոլորի համար՝ ձևավորելով առողջ հարաբերություններ և մանկավարժական, և աշակերտական կոլեկտիվներում:

Այն միջավայրում, ուր տիրում է առողջ մթնոլորտ, կդաստիարակվի ինքնավստահ, կամային բարձր որակներ ունեցող, հավասարակշռված և ուժեղ հոգեբանությամբ աշակերտ, ով հասարակության համար հետագայում կդառնա ոչ թե պատուհաս, այլ՝պիտանի մարդ:

Գրականություն

Վորլդ Վիժն Հայաստանի <<Նավակ>> երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն՝ <<Անվտանգ և բարենպաստ միջավայրի ապահովումը դպրոցներում>>

Մ.Միքայելյան <<Բռնության և զոհի ոգեբանություն>> Երևան, 2016 Վիքիպեդիա

О. Глазман Психологические особенности участников буллинга

Olweus D. Bullying at school: What we know and what we can do. Malden , MA: Blackwell Publishing (1993)

Կայքեր՝

https://www.arlis.am/documentview.aspx?docID=143703

https://www.aravot.am/2021/11/19/1230314/

https://www.unicef.org/armenia

https://media.foxford.ru/articles/shkolnyy-bulling

https://mors.center/chto-takoe-bulling

https://krtaditak.am/12-%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80-%D5%B4%D5%AB%D5%BF%D6%84-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/

https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D5%A1%D6%80%D5%BA%D5%B4%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%A5%D5%BC%D5%A1%D5%B6%D5%AF%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB